

«Լավ սկիզբը լավ ավարտ կունենա»

Հույս է հայտնել ԿԳՆ ԳՊԿ նախագահ Սամվել Հարությունյանը

Գիտության զարգացման առաջիկա տասը տարիների ռազմավարությունը, ֆինանսավորման նոր կարգերի եւ գիտության ոլորտի գերակա ուղղությունների վերաբերյալ փաստաթղթերը մոտավորապես մեկ տարի առաջ ներկայացվել են ՀՀ կառավարություն: Մայիսի 27—ին գիտության ոլորտի գերակա ուղղությունների եւ գիտության զարգացման առաջիկա տասը տարիների ռազմավարության վերաբերյալ փաստաթղթերն ընդունվել են: Ընտրված են մի քանի թիրախներ, որոնց ուղղությամբ առաջիկա 10 տարիներին որոշակի աշխատանքներ են տարվելու: Երեկ հրավիրված մամուլի ասուլիսում այդ մասին խոսեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Ըստ նրա՝ առաջիկա մեկ տասնամյակի ռազմավարություն ընդունելով, դեռեւս չենք կարող ասել, թե գործողությունների հստակ ծրագիր ունենք:

Իսկ ինչ վերաբերում է տեսլականին, ապա դա հետեւյալն է. 2020թ. ՀՀ—ն լինելու է որպես գիտելիքահենք տնտեսություն ունեցող հիմնարար եւ կիրառական գիտական հետազոտությունների մշակումների մակարդակով եվրոպական գիտատեխնիկական տարածքում մրցունակ երկիր:

«Հիմնական թիրախները, որոնց ուղղությամբ աշխատանքներ պետք է տարվեն, հետեւյալն են՝ գիտական ներուժի արդյունավետ վերարտադրությունը, գիտական ենթակառուցվածքների արդիականացումը, հիմնարար եւ կիրառական հետազոտությունների խթանումը (հատկապես հիմնարար հետազոտությունների մակարդակը պետության դեմքն է ցույց տալիս), միջազգային համագործակցության զարգացումը, որը կարելու է թիրախներից է, գիտության, կրթության եւ տեխնոլոգիաների փոխկապակցված էներգետիկ ինքնակարգավորվող համակարգի ձեւավորումը»,—ասաց Ս. Հարությունյանը:

Նա հավելեց, որ որպես առանձին թիրախ ընտրված է նաեւ հայագիտության ոլորտի առաջնային զարգացումը: Իսկ այդ ծրագրի պատասխանատու կատարողը լինելու է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան: Ի դեպ՝ գիտության գերակայությունները 3—4 տարին մեկ վերանայվում են: ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի խոսքերով՝ գերակա ոլորտներ են ընտրվել՝

ա. հայագիտությունը, հումանիտար եւ սոցիալ—տնտեսագիտական գիտությունները,

բ. կյանքի մասին գիտությունները,

գ. առաջատար տեխնոլոգիաները, տեղեկատվական տեխնոլոգիաները,

դ. տիեզերքի ուսումնասիրությունը, Երկրի մասին գիտությունները, խնայողական բնօգտագործումը,

ե. կարելու է կիրառական հետազոտությունները, խթանող հիմնարար գիտությունները:

«Յուրաքանչյուր գերակայության համար կարելու է խնդիրները եւ զարգացման ժամանակացույցը պետք է ձեւավորվի, որից հետո էլ այդ ծրագրերը կֆինանսավորվեն»:

«Քենդլը» Հայաստանը կղասի լուրջ պետությունների շարքին

ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ «Քենդլ» (սինքրոտրոնային ճառագայթման օգտագործմամբ գիտական հետազոտությունների կենտրոն) ծրագրին որոշակի ընթացք է տրվելու: Այդ նախագծի նպատակն է Հայաստանում ստեղծել առնվազն 5 փորձարարական կայաններով գիտական կենտրոն, որտեղ գիտնականները ինտենսիվ լուսային հոսքի օգնությամբ հնարավորություն կունենան հետազոտել մոլեկուլներ, կենսաբանական օբյեկտներ եւ նյութեր: Արդյունքում կկառուցվի շրջակա միջավայրի համար անվտանգ արագացուցչային կենտրոն: Դա աննախադեպ կլինի հետխորհրդային, Արեւելյան Եվրոպայի եւ Մերձավոր Արեւելքի տարածաշրջաններում:

Ենթադրվում է, որ սա լինելու է միջազգային ծրագիր, որի համաձայն այդ սարքը միայն Հայաստանի ուժերով չի կառուցվելու: Հանրապետությունն իր վրա է վերցրել ծրագրի ֆինանսավորման 25 տոկոսը:

«Երեւան—Աբովյան մայրուղուն հարող Մայակովսկի խճուղու տարածքը «Քենդլ» կենտրոնի կառուցման համար հարմարավետ է: Սարքն էլ, հավանաբար, կտեղադրվի Աբովյանի շրջանում՝ կենտրոնական գրասենյակից ոչ հեռու,— նշեց ԳՊԿ նախագահը՝ ավելացնելով,— այս կառույցը քաղաքական լուրջ հետեւանքներ կարող է ունենալ: Հույս ունենք, որ նախագծի իրականացման գործում կունենանք Ռուսաստանի, ԱՄՆ—ի, Ֆրանսիայի, Չինաստանի աջակցությունը: Աշխարհում շատ քիչ երկրներ կան, որոնք ունեն եւ արագացուցիչ, եւ ատոմակայան: Հայաստանն այդ սակավաթիվ երկրներից է: «Քենդլի» շնորհիվ մենք կհայտնվենք բավականին լուրջ պետությունների շարքում: Հավանաբար, համագործակցություն կլինի նաեւ մեր հարեւան պետությունների, այդ թվում՝ Թուրքիայի հետ»: Վերջում նա հույս հայտնեց, որ լավ սկիզբը լավ ավարտ կունենա: Նշենք նաեւ, որ ՀՀ կառավարության կողմից «Քենդլ» նախագծի իրականացման պատասխանատու է նշանակվել ԿԳՆ ԳՊԿ—ն: Համակարգող խորհրդի որոշմամբ, որի նախագահը ՀՀ վարչապետն է, մոտակա ժամանակներս կկազմավորվի «Քենդլ» փորձագիտական հանձնաժողովը, որի կազմում կլինեն ճանաչված փորձագետներ: Իսկ ԵՊՀ—ում մոտ օրերս տեղի կունենա միջազգային փորձագետների հանդիպում «Քենդլ» ծրագրի հեղինակների հետ:

Թամարա ՄՈՒՐԱԴՅԱՆ
26-06-2010

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՎԱԿՈՒՄՈՒՄ Է ՆՈՐ ՓՈՂ



Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությամբ հայրենական գիտության զարգացման գործընթացը թևակոխում է նոր փուլ: Այսպես է կարծում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ **Սամվել Հարությունյանը**: Ներկայացնելով որոշ գործնական քայլեր՝ Հարությունյանը նշեց, որ ռազմավարական նշանակություն ունի հանրապետությունում գիտական կենտրոնների ստեղծումը, որոնք միտված են գիտական ներուժի, նյութատեխնիկական բազայի, տարածքների, վարչասպասարկվող անձնակազմի օպտիմալացմանը, ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործմանը և այլն:

Սամվել Հարությունյանը տեղեկացրեց, որ ՀՀ-ում մեկնարկել է «ՔԵՆԴԼ» միջազգային գիտական կենտրոն հիմնելու ծրագիրը: Նախագծի նպատակն է՝ Հայաստանում ստեղծել առնվազն 5 փորձարարական կայաններով գիտական կենտրոն, որտեղ գիտնականներն ինտենսիվ լույսի օգնությամբ մոլեկուլներ, կենսաբանական նյութեր, օբյեկտներ հետազոտելու հնարավորություն կունենան: Արդյունքում կկառուցվի շրջակա միջավայրի համար անվտանգ արագացուցիչային կենտրոն, որն աննախադեպ կլինի հետխորհրդային, Արևելյան Եվրոպայի և Մերձավոր Արևելքի տարածաշրջաններում: Մամուլում տեղ գտած դիտարկումները, ըստ որոնց, արագացուցիչը կարող է վնասակար ազդեցություն ունենալ մարդկանց առողջության վրա, Հարությունյանը անհեթեթություն համարեց:

Բանախոսը նշեց, որ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն կարևորում է համագործակցության դերը գիտության ոլորտում: Այս համատեքստում նա նշեց, որ միայն 2009-ին ԳՊԿ նախաձեռնությամբ 2 միջազգային մրցույթ է հայտարարվել, որոնց արդյունքում ստեղծվել են 2 միջազգային գիտական լաբորատորիաներ, 1 միջազգային գիտահետազոտական խումբ, ֆինանսավորվել են երկկողմ փոխգործակցության ծրագրի 9 հաղթող, ֆինանսական աջակցություն են ստացել 24 երիտասարդական գիտական ծրագրեր: Report.am-ը հետաքրքրվեց, թե այդ ծրագրերն ինչ փուլում են և դրանցից որոնք են հիշատակման արժանի. «2 տարի հետո որ այդ հարցը տաք, ես կպատասխանեմ: Ներկայացված 120 ծրագրից 80-ը արժանի էին ֆինանսավորման, բայց 24-ը միայն ֆինանսավորվեցին: Գիտական մեծ պոտենցիալ ունեցող երիտասարդները ներկայացրել են հոյակապ ծրագրեր: Եթե մեր գումարները շատ լինեին, ես հաճույքով կֆինանսավորեի բոլոր 80 ծրագրերը, փողը բավարարեց 24-ին»: Մեր հարցին, թե ԳՊԿ-ն ծրագրերի ընթացքից տեղյակ չէ՞, քանի որ 2 տարի անց կարող է միայն պատասխանել վերոնշյալ հարցին, Սամվել Հարությունյանն ասաց. «Իհարկե տեղյակ է, մենք 6 ամիսը մեկ ընթացիկ հաշվետվություններ ենք ստանալու, տարեվերջում կստանանք տարեկան հաշվետվությունները: Եթե հաշվետվությունները չբավարարեն փորձագետներին, ծրագրի ֆինանսավորումը կդադարեցվի»:

Սպասե՛ք:

Գիտության կոմիտեն ակտիվացել է

Երեկ «Փաստարկ» ակումբում տեղի ունեցավ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի ասուլիսը, որի նպատակն էր ներկայացնել որոշ գործնական մեխանիզմներ, որոնք այսօր իրականացվում են ՀՀ-ում գիտական գործունեության կազմակերպման ոլորտում: Դրանց թվում է գիտական կենտրոնների ստեղծումը: Գիտական կենտրոն կարող են ձևավորել ՀՀ մեկ կամ մի քանի գիտական, գիտատեխնիկական, գիտակրթական գործունեություն իրականացնող կազմակերպություններ, որոնք ունեն համապատասխան նյութատեխնիկական բազա եւ տարածքներ, բարձր որակավորում ունեցող գիտական աշխատողներ եւ մասնագետներ, միջազգային համագործակցության եւ գիտական արդյունքների ներդրման փորձ: Ներկայումս պատրաստ է գիտական 3 կենտրոններ ստեղծելու ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Առաջիկայում Հայաստանում կստեղծվի առնվազն հինգ փորձարարական կայաններով գիտական կենտրոն, որտեղ գիտնականները ինտենսիվ լուսային հոսքի օգնությամբ հնարավորություն կունենան հետազոտել մոլեկուլներ, կենսաբանական օբյեկտներ եւ նյութեր: Կկառուցվի շրջակա միջավայրի համար լրիվ անվտանգ արագացուցչային կենտրոն, որն աննախադեպ կլինի հետխորհրդային, Արեւելյան Եվրոպայի եւ Մերձավոր Արեւելքի տարածաշրջաններում: Ֆինանսավորման նոր կարգերի ներդրմամբ կամրագրվի արդեն իսկ փորձարկված գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգը, ինչպես նաեւ գիտական ծրագրերի հայտերի եւ իրականացվող ծրագրերի հաշվետվությունների գնահատման միջազգային չափանիշներին համապատասխան փորձաքննության կարգը: Ս. Հարությունյանը նշեց, որ կոմիտեն աշխատանքներ է տանում գիտության ոլորտում նոր միջազգային կապեր հաստատելու, միջազգային դրամաշնորհային մրցույթներ հայտարարելու ուղղությամբ:

Միայն 2009 թվականի ընթացքում ԳՊԿ նախաձեռնությամբ հայտարարվել է 2 միջազգային մրցույթ՝ մեկը՝ Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի, երկրորդը՝ Երիտասարդականը, ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների եւ մշակումների հիմնադրամի ու Գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի հետ:

ՀՀ գիտության և կրթության տեսլականը՝ առաջիկա 10 տարիների համար

«Առաջիկա 10 տարիների համար մեր տեսլականը պետք է լինի՝ 2020թ.-ը մենք Հայաստանը տեսնում ենք գիտելիքահեն տնտեսություն ունեցող, նաև կիրառական գիտական հետազոտությունների մշակումների մակարդակով, եվրոպական գիտատեխնիկական տարածքում մրցունակ երկիր», - այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը և հավելեց, որ տեսլականը բավականին լուրջ քննարկվել է տարբեր գիտական հիմնարկներում և, ըստ նրա, որոշ մարդիկ կարծիք են հայտնել, որ ներկայացված տեսլականը «չափազանցված» և «շատ հավակնոտ է»:

Բանախոսը համոզմունք հայտնեց, որ ցանկացած ոլորտի ռազմավարություն պետք է լինի ամբիցիոզ, «հակառակ դեպքում ռազմավարություն ընդունելը դառնում է անիմաստ»:

«Առաջիկա 10 տարիների ընթացքում Հայաստանի գիտությունը, և մեր գիտական կադրերը և մեր պետությունը ի վիճակի են հասնել այնպիսի մակարդակի, որ մենք եվրոպական գիտակրթական տարածքներում լինենք մրցունակ երկիր», - շեշտեց ԳՊԿ նախագահը:

Ըստ նրա, առաջիկա 10 տարիներին ընտրված են հետևյալ թիրախները՝ պետք է ստեղծել գիտության կայուն զարգացում ապահովող համակարգ, գիտության ներուժի արդյունավետ վերարատադրություն, գիտական ենթակառուցվածների արդիականացում, ինչպես նաև անհրաժեշտ է հիմնարար և կիրառական հետազոտությունների խթանանում:

«Հիմնարար հետազոտությունները այն ոլորտն է, որը նպաստում է և դպրոցի, և բուհի, և ընդհանրապես կիրառական գիտության զարգացմանը: Հիմնարար հետազոտությունների մակարդակը ցույց է տալիս պետության դեմքը», - շեշտեց Սամվել Հարությունյանը:

«Արմենպրես», 25.06.2010

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն կարելուորում է միջազգային համագործակցությունը կրթության զարգացման ոլորտում

Կարելուորելով միջազգային համագործակցության զարգացման դերը գիտության զարգացման ոլորտում Հայաստանի Հանրապետության Կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն աշխատանքներ է տանում գիտության ոլորտում նոր միջազգային կապեր հաստատելու եւ միջազգային դրամաշնորհային մրցույթներ հայտարարելու ուղղությամբ: Այս մասին լրագրողների հետ հանդիման ժամանակ այսօր նշեց գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը՝ կարելուորելով երիտասարդական գիտական ծրագրերի ֆինանսավորումը:

Առաջիկայում նախատեսվում է մրցույթ հայտարարել Բելառուսի հետ եւ համագործակցության պայմանագիրն արդեն կնքված է: 2009-ին ԳՊԿ նախաձեռնությամբ հայտարարվել են նման 2 միջազգային մրցույթներ, որոնցից մեկը Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի, մյուսը՝ ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների եւ մշակումների հիմնադրամի ու գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի հետ: Առաջին մրցույթի արդյունքում ստեղծվեցին 2 գիտական միջազգային լաբորատորիաներ, 1 միջազգային գիտահետազոտական խումբ, ֆինանսավորվեցին փոխգործակցության ծրագրի 9 հաղթողներ: Երկրորդ մրցույթի արդյունքում ֆինանսական աջակցություն ստացան 24 երիտասարդական գիտական ծրագրեր:

«Հայաստանում կան գիտական լուրջ ներուժ ունեցող երիտասարդներ», - ասաց Ս. Հարությունյանը՝ շեշտելով, որ այս ծրագրի շրջանակներում ներկայացվել են 120 երիտասարդական գիտական ծրագրեր եւ ըստ Կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի՝ այդ ծրագրերից 80-ը հնարավորության դեպքում հաճույքով կֆինանսավորեին:

Ս. Հարությունյան. «2020-ին Հայաստանը տեսնում ենք գիտական առումով առաջատար երկիր»

ԵՐԵՎԱՆ, 25 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Գիտական գործունեության կազմակերպման նոր մեխանիզմները այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Ըստ նրա՝ ՀՀ կառավարության որոշմամբ ընդունված Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությամբ հայրենական գիտության զարգացման գործընթացը կարծես թե թեւակոխում է մի նոր փուլ, որտեղ առաջ են քաշվում ռազմավարությամբ ամրագրված թիրախային կետերին լուծումներ տալու խնդիրները: Ս. Հարությունյանի խոսքով՝ կիրառվում են որոշ գործնական մեխանիզմներ, որոնք այսօր իրականացվում են գիտական գործունեության կազմակերպման ոլորտում: Դրանք գիտական կենտրոնների ստեղծումը, Ֆինանսավորման նոր կարգերի մուտքագրումն ու միջազգային համագործակցության զարգացումն են: «2020-ին Հայաստանը տեսնում ենք գիտական առումով առաջատար երկիր»,- ասաց Բանախոսը՝ շեշտելով, որ առաջիկա տասը տարիներին մենք եվրոպական գիտակրթական տարածքում կլինենք մրցունակ երկիր:

Որպես առաջնային խնդիրներ ներկայացվեցին հիմնարար հետազոտությունների խթանումը, հայագիտության ոլորտի առաջնային զարգացումը: Ս. Հարությունյանը ներկայացրեց նաեւ որոշ գերակայություններ, որոնք կվերանայվեն մինչեւ 2014-ը: Դրանք են հայագիտությունը, կյանքի մասին գիտությունները, առաջատար տեխնոլոգիաները, տիեզերքի մասին հետազոտությունները, այլ ուղղություններ: «Մենք կձեւակերպենք բեկումնային խնդիրները եւ համապատասխան ժամանակացույց կսահմանենք»,- հավաստիացրեց գիտության պետական կոմիտեի նախագահը:

Պատրաստ է գիտական երեք կենտրոնների ստեղծման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը

Հայաստանում կստեղծվեն գիտական կենտրոններ, որոնցում կմիավորվի գիտական ներուժը, զանազան կազմակերպությունների շահերն ու նրանց տեխնիկական բազան: Ինչպես հունիսի 25-ին կայացած մամուլի սույնիստում նշել է Գիտության գծով պետկոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, կենտրոնները թույլ կտան ընդհանրացնել կազմակերպությունների գիտական հետաքրքրությունները, օպտիմալացնել գիտական ներուժը, նյութատեխնիկական բազան, տարածքներն ու վարչասպասարկող անձնակազմը, բարձրացնել ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը և այլն: «Գիտական կենտրոն կարող են ձևավորել ՀՀ մեկ կամ մի քանի գիտական, գիտատեխնիկական, գիտակրթական գործունեություն իրականացնող կազմակերպություններ, որոնք ունեն համապատասխան նյութատեխնիկական բազա և տարածքներ, բարձր որակավորում ունեցող գիտական աշխատողներ և մասնագետներ, միջազգային համագործակցության և գիտական արդյունքների ներդրման փորձ», - ասել է Սամվել Հարությունյանը:

Սամվել Հարությունյանի խոսքով, ներկա պահին պատրաստ է գիտական 3 կենտրոններ ստեղծելու ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Գիտական կենտրոնները ձևավորվում են ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի որոշման համաձայն: Գիտական կենտրոններ ձևավորելու գործընթացը կանոնակարգում է ՀՀ կրթության և գիտության նախարարությանն առընթեր Գիտության պետական կոմիտեն:

«Ֆինանսավորման նոր կարգերը կնպաստեն գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը»

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ խոսել է նաև Ֆինանսավորման նոր կարգերի մասին: Այս մասին տեղեկացանք ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնից: Նա նշել է, որ Ֆինանսավորման նոր կարգերի ընդունման նպատակը ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեությանն ուղղված ֆինանսավորման ձևերի կատարելագործումն է, որը կնպաստի գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը, կհստակեցնի առկա ֆինանսավորման ձևերը, դրանց հատկացման չափանիշները և մեխանիզմները՝ ապահովելով համապատասխան չափորոշիչներով միջոցների հասցեագրված հատկացումը ու դրանց օգտագործման պատասխանատվության բարձրացումը:

«Բացի այդ, հնարավորություն կստեղծվի արդյունավետ վերահսկողություն իրականացնել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեությանը հատկացված ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ», - նշել է Սամվել Հարությունյանը:

Նոր կարգերի ներդրմամբ կամրազրվի արդեն իսկ փորձարկված գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգը, ինչպես նաև գիտական ծրագրերի հայտերի և իրականացվող ծրագրերի հաշվետվությունների գնահատման միջազգային չափանիշներին համապատասխան փորձաքննության կարգը:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահը կարևորել է նաև միջազգային համագործակցության զարգացման դերը գիտության զարգացման ոլորտում: «Կոմիտեն աշխատանքներ է տանում գիտության ոլորտում նոր միջազգային կապեր հաստատելու, միջազգային դրամաշնորհային մրցույթներ հայտարարելու ուղղությամբ: Միայն 2009 թվականի ընթացքում ԳՊԿ նախաձեռնությամբ հայտարարվել է 2 միջազգային մրցույթ. մեկը՝ Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի, և երկրորդը՝ երիտասարդականը ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամի և Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի հետ: Առաջին մրցույթի արդյունքում ստեղծվեցին 2 գիտական միջազգային լաբորատորիա, 1 միջազգային գիտահետազոտական խումբ, ֆինանսավորվել են երկկողմ փոխգործակցության ծրագրի 9 հաղթող: Երկրորդ մրցույթի արդյունքում ֆինանսական աջակցություն են ստացել 24 երիտասարդական գիտական ծրագրեր», - տեղեկացրել է Ս. Հարությունյանը:

Մ. Հարությունյան. «Գիտական կենտրոնների ստեղծման նպատակն է կազմակերպությունների գիտական հետաքրքրությունների ընդհանրացումը»

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր հանդիպել է լրագրողների հետ և անդրադարձել Գիտական գործունեության կազմակերպման նոր մեխանիզմներին: Այս մասին տեղեկացանք ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնից:

Սամվել Հարությունյանը խոսել է գիտական կենտրոնների ստեղծման անհրաժեշտության մասին: Գիտական կենտրոնների ստեղծման նպատակն է կազմակերպությունների գիտական հետաքրքրությունների ընդհանրացումը, գիտական ներուժի, նյութատեխնիկական բազայի, տարածքների, վարչասպասարկող անձնակազմի օպտիմալացումը, ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացումը և այլն: Գիտական կենտրոն կարող են ձևավորել ՀՀ մեկ կամ մի քանի գիտական, գիտատեխնիկական, գիտակրթական գործունեություն իրականացնող կազմակերպություններ, որոնք ունեն համապատասխան նյութատեխնիկական բազա եւ տարածքներ, բարձր որակավորում ունեցող գիտական աշխատողներ եւ մասնագետներ, միջազգային համագործակցության և գիտական արդյունքների ներդրման փորձ:

Գիտական կենտրոնները ձևավորվում են ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25 N 1555-Ն որոշման համաձայն: Գիտական կենտրոններ ձևավորելու գործընթացը կանոնակարգում է Գիտության պետական կոմիտեն: Ներկայումս պատրաստ է գիտական 3 կենտրոններ ստեղծելու ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Նա նաև խոսել է Քենդլ միջազգային գիտական նախագծի նպատակն է Հայաստանում ստեղծել առնվազն հինգ փորձարարական կայաններով գիտական կենտրոն, որտեղ գիտնականները ինտենսիվ լուսային հոսքի օգնությամբ հնարավորություն կունենան հետազոտել մոլեկուլներ, կենսաբանական օբյեկտներ և նյութեր: Արդյունքում կկառուցվի շրջակա միջավայրի համար լրիվ անվտանգ արագացուցչային կենտրոն, որն աննախադեպ կլինի հետխորհրդային, Արևելյան Եվրոպայի և Մերձավոր Արևելքի տարածաշրջաններում:

Պրոտեկտորներն ամսական 1000 դոլար են ստանում, բայց գիտությունը մնում է անփող



Գիտության առևտրայնացումը մնում է հիմնախնդիր: Հաջորդ տարվանից պետական բյուջեից գումարներ են հատկացվելու ինովացիոն բնույթի ծրագրերի ֆինանսավորման համար, սակայն կֆինանսավորվեն միայն այն ծրագրերը, որոնք մասնավոր հատվածից եւս կունենան որոշակի համաֆինանսավորում: Այս մասին հունիսի 25-ին «Փաստարկ» ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը՝ ավելացնելով, որ միայն մասնավոր հատվածից համաֆինանսավորում գտած ծրագրերը կարող են դրվել քննարկման:

Ըստ Հարությունյանի՝ գիտության արդյունքների առևտրայնացման գործով պետք է զբաղվի գիտնականի մենեջերը, տվյալ դեպքում՝ գիտության գծով պրոտեկտորը: «Գիտության գծով պրոտեկտորը պետք է գնա բանակցությունների մասնավոր հատվածի հետ, ներկայացնի ծրագիրը եւ ասի, թե ինչով է կարելու այն եւ գործարարի որ խնդիրների լուծմանը կարող է այն նպաստել», - ասաց Հարությունյանը՝ նշելով, որ պրոտեկտորը պետք է միջնորդ հանդիսանա գիտնականի եւ գործարարի միջև:

[NEWS.am-Ինովացիայի](#) թղթակցի այն հարցին, թե պրոտեկտորը ինչո՞ւ պետք է շահագրգռված լինի օգնելու գիտնականին, Գիտության պետական կոմիտեի նախագահը զարմացած պատասխանեց. «Ի՞նչ է նշանակում շահագրգռվածություն, դա նրա գործն է, եւ այդ խնդիրների լուծման համար նա բավականին լավ է վճարվում»:

Պարզվում է՝ պրոտեկտորի աշխատավարձը 300-400 հազար դրամ է (մոտ 1000 դոլար): «Նրան հո սիրուն աչքերի համա՞ր չեն տալիս այդ գումարը», - իր տեսակետը հիմնավորեց գիտական քաղաքականության գծով գլխավոր պատասխանատուն:

Սակայն պրն. Հարությունյանն այդպես էլ թեկուզ 1 օրինակ չկարողացավ նշել, երբ պրոտեկտորներին հաջողվել է օգնել գիտնականին՝ առևտրայնացնելու իր գյուտը:

ПЛАН ПЯТИЛЕТНЕГО НАУЧНОГО РАЗВИТИЯ АРМЕНИИ В СКОРОМ ПЕРЕДАН НА РАССМОТРЕНИЕ ПРАВИТЕЛЬСТВА

План научного развития Армении на 2010-2015 годы в ближайшие месяцы будет передан на рассмотрение правительства, заявил в пятницу на пресс-конференции председатель Госкомитета по науке Самвел Арутюнян.

По его словам, в отличие от принятой 27 мая стратегии развития науки в Армении на ближайшие 10 лет план пятилетней работы будет содержать конкретные сроки реализации программ по развитию науки, а также перечень основных ведомств, занимающихся научной деятельностью в той или иной сфере.

«Соответствующие ведомства, по выработанной программе, должны развивать сферу арменоведения, социально-экономические научные дисциплины, передовые информационные технологии, проводить космические и прикладные исследования, а также изучать возобновляемые источники энергии», - отметил Арутюнян.

По его словам, одновременно правительством одобрен проект по созданию трех научных центров на территории Армении, цель которых заключается в обобщении научных интересов организаций, повышении эффективности использования материально-технической базы, научного потенциала, финансовых средств, оптимизация административного штата.

Научные центры формируются согласно решению правительства Армении от 25 декабря 2008 года.

Գիտության ոլորտում բարձր մակարդակ՝ «Քենդլ»-ի շնորհիվ



2020 թ-ին նախատեսվում է Հայաստանում գիտության եւ գիտատեխնիկական գործունեության մակարդակը հասցնել այնպիսի աստիճանի, որ Հայաստանը Եվրոպական երկրների շարքում հանդես գա որպես մրցունակ երկիր, ինչի հետեւանքով գիտությունն ավելի ակտիվ ներգրավվածություն կունենա երկրի տարբեր ոլորտներում: Այս մասին մամլո ասուլիսին հայտարարել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Հարությունյանի խոսքով՝ գիտության ոլորտում բարձր մակարդակ հնարավոր է ապահովել ամերիկյան «Քենդլ»

ծրագրի միջոցով, որի նպատակն է Հայաստանում ստեղծել առնվազն հինգ փորձարարական կայաններով գիտական կենտրոն, որտեղ գիտնականները ինտենսիվ լուսային հոսքի օգնությամբ հնարավորություն կունենան հետազոտել մոլեկուլներ, կենսաբանական օբյեկտներ եւ նյութեր:

Արդյունքում կկառուցվի շրջակա միջավայրի համար լրիվ անվտանգ արագացուցչային կենտրոն:

Սամվել Հարությունյանի կարծիքով՝ այդ ծրագրի շնորհիվ Հայաստանը կհայտնվի լուրջ դիրքեր ունեցող երկրների շարքում:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահը անդրադարձել է նաեւ գիտության ոլորտում ֆինանսավորման նոր կարգերին: Ս. Հարությունյանը նշել է, որ նոր կարգերի ներդրմամբ կամրագրվի արդեն իսկ փորձարկված գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգը, ինչպես նաեւ գիտական ծրագրերի հայտերի եւ իրականացվող ծրագրերի հաշվետվությունների գնահատման միջազգային չափանիշների համապատասխան փորձաքննության կարգը: